«Կորինտյան» Աճուրդի Տուն ՍՊԸ-ի կողմից կազմակերպված աճուրդի մասին հրապարակային ծանուցում

2026-11-05 14:03:26

Հայտատու	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդված

Ստորև նշված հասցեում տեղի կունենա «Կորինտյան» Աճուրդի Տուն ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված, «Մելլաթ Բանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետևյալ լոտի բաց աճուրդը.

- Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, Արդյունաբերական հանգույց Էջմիածնի խճուղի 3 հասցեում գտնվող անշարժ գույք (սեփականության վկայական թիվ 05022026-03-0017, գաղտնաբառ՝ Rj9PXGEXGFGT, հողամասի մակերեսը՝ 3.0632 հա, կադաստրային ծածկագիրը՝ 03-003-0443-0004, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, շինությունները՝ վարչական շենք՝ 519.8 ք.մ., արտադրամաս՝ 1033.93 ք.մ., ջրավազան՝ 7.2 ք.մ., պահակատուն՝ 33.7 ք.մ., բոքս՝ 405.42 ք.մ., լցակայան՝ 14 ք.մ., բետոնե տարողություն՝ 31.3 ք.մ., բոքսեր՝ 147 ք.մ., առևտրի սրահ՝ 81.4 ք.մ., պահակատուն՝ 4.6 ք.մ., զուգարան՝ 2.9 ք.մ., սպանդանոց՝ 3036.4 ք.մ., պարիսպ՝ 12.21 ք.մ., 14.65 խ.մ., ծածկ՝ 83.6 ք.մ., պարիսպ՝ 3.7 ք.մ., 2 խ.մ., հարթակ՝ 291.4 ք.մ., պարիսպ՝ 30.73 ք.մ., 82.97 խ.մ., պարիսպ՝ 3.7 ք.մ., 7.4 խ.մ., պարիսպ՝ 116.4 ք.մ., 232.8 խ.մ.)։ Լոտի մեկնարկային գինը՝ 780,800,000 (յոթ հարյուր ութսուն միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ։

Աճուրդի 1-ին փուլն անցկացվելու է դասական եղանակով և սկսվելու է 23.11.2026թ., ժ. 16:00-ին։ Աճուրդի հետագա փուլերը (ըստ անհրաժեշտության) անցկացվելու են հոլանդական եղանակով՝ հետևյալ օրերին և ժամերին.
• 2-րդ աճուրդ՝ 26.11.2026թ., ժամը 16:00-ին,
• 3-րդ աճուրդ՝ 01.12.2026թ., ժամը 16:00-ին,
• 4-րդ աճուրդ՝ 04.12.2026թ., ժամը 16:00-ին,
• 5-րդ աճուրդ՝ 09.12.2026թ., ժամը 16:00-ին,
• 6-րդ աճուրդ՝ 14.12.2026թ., ժամը 16:00-ին։

Յուրաքանչյուր հաջորդ աճուրդն անցկացվում է բացառապես նախորդ աճուրդի չկայանալու դեպքում: Յուրաքանչյուր հաջորդ աճուրդի մեկնարկային գինը նվազեցվում է նախորդ աճուրդի մեկնարկային գնի նկատմամբ 10 տոկոսով, բացառությամբ վեցերորդ աճուրդի, որի մեկնարկային գինը նվազեցվում է նախորդ աճուրդի մեկնարկային գնի նկատմամբ 4,73 տոկոսով:
Սույն հրապարակային ծանուցմամբ նախապես սահմանվում են բոլոր վեց աճուրդների անցկացման օրերը, ժամերը և պայմանները: Յուրաքանչյուր աճուրդի չկայանալու դեպքում Կազմակերպիչը www.azdarar.am կայքում հրապարակում է լրացուցիչ տեղեկատվական հաղորդագրություն՝ հաջորդ աճուրդի անցկացման վերաբերյալ՝ նշելով դրա օրը, ժամը և մեկնարկային գինը, ինչպես նաև հղում կատարելով սույն հիմնական հրապարակային ծանուցմանը: Նշված լրացուցիչ հաղորդագրությունները կրում են տեղեկատվական բնույթ, չեն սահմանում նոր աճուրդ և չեն փոփոխում սույն հրապարակային ծանուցմամբ նախապես սահմանված պայմանները:

Մասնակցության համար անհրաժեշտ է սույն ծանուցման հրապարակման օրվանից մինչև աճուրդի համապատասխան փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն ստորև նշված հասցեով Կազմակերպչին ներկայացնել.
- աճուրդին մասնակցելու մասին Կազմակերպչի կողմից սահմանված ձևի դիմում (դիմումի ձևը կարելի է ստանալ ստորև նշված հասցեում),
- 39,040,000 (երեսունինը միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամի չափով նախավճարի մուծման փաստը հաստատող վճարման անդորրագիրը,
- ֆիզիկական անձանց համար՝ անձը հաստատող փաստաթուղթ,
- իրավաբանական անձանց համար՝ կանոնադրություն և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված քաղվածք,
- այլ անձի անունից հանդես գալու դեպքում՝ ի լրումն վերոգրյալի նաև լիազորությունները հաստատող փաստաթուղթ:

Նախավճարը պետք է վճարվի Կազմակերպչի՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված 1570014821060200 հաշվեհամարին:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, կհամարվի աճուրդում հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը հաղթողին կորոշի վիճակահանության միջոցով: Հաղթողին որոշելու կարգի այլ մանրամասները սահմանված են աճուրդի կանոնակարգով, որին կարելի է ծանոթանալ ստորև նշված կարգով:
Լոտը կարող է ուսումնասիրվել դրա գտնվելու վայրում սույն ծանուցման

հրապարակման պահից սկսած յուրաքանչյուր օր, ժամը 12.00-ից 18.00-ն՝ նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ:
Աճուրդի կանոնակարգին կարելի է ծանոթանալ և անվճար ստանալ կանոնակարգի պատճենը՝ այցելելով ստորև նշված հասցեով աշխատանքային օրերի ընթացքում, ժամը 12.00-ից 18.00-ն:

Այլ մանրամասների համար դիմել՝
Հասցե՝ ք. Երևան, Եկմալյան 6
Հեռ.՝ +374 41 459995
Էլ. փոստ՝ lexinfo.auction@gmail.com

37441459995

lexinfo.auction@gmail.com

ք. Երևան, Եկմալյան 6